ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՀՊ-ԳՀԱՇՁԲ-18/02 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 11.06,2018թ. ժամը 10-00-ին, ՀՀ հաշվեքննիչ պալատի վարչական շենքում, ք.Երևան, Բաղրամյան 19 հասցեում /ՀՀ կառավարության 04.05.2017 թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի /այսուհետ Կարգ/ 46-րդ կետին համապատասխան փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի անդամներին փոխանցվել է 11/06/2018թ-ին 09-00/:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ռիմա Բաբայանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Լևոն Հարությունյանը, Գոհար Զոհրաբյանը, Նաիրա Պետրոսյանը, Ծովինար Բեդիրյանը և քարտուղար Աննա Անանյանը:

Օրակարգ

Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

ՀՊ-ԳՀԱՇՁԲ-18/02 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովն ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված եզրակացությունը/կցվում է/՝ պարզ դարձավ, որ մասնակցի կողմից ներկայացված հայտում մասնակցի անվանման մեջ տեխնիկական վրիպակի պատճառով կատարվել է տառասխալ /ճիշտ անվանումն է «ԱԼԱՐԷԼԼԻ» ՍՊԸ/:

Գնահատող հանձնաժողովի նախագահ Ռիմա Բաբայանը ներկայացրեց հանձնաժողովի անդամների կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքները /գնահատման թերթիկները կցվում են/, որի հիման վրա հանձնաժողովը որոշեց՝

1. Հաշվի առնելով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի վերաբերյալ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրած տեղեկատվությունը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, այն է առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ՝ Կարգի 44-րդ կետի համաձայն. առաջին տեղը զբաղեցրած «ԱԼԱՐԷԼԼԻ» ՍՊԸ-ի հայտը մերժել:
2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ մրցույթը հայտարարել չկայացած և հաստատել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.

Բաբայան Ռիմա _____ ԳՊ/ԳԱՊ

Հարությունյան Լևոն _____ ԳՊ/ԳԱ

Զոհրաբյան Գոհար _____ ԳՊ/ԳԱ

Պետրոսյան Նաիրա _____ ԳՊ/ԲԱ

Բեդիրյան Ծովինար _____ ԳՊ/ԲԱ

Հանձնաժողովի քարտուղար _____ Աննա Անանյան